ՀՏԴ՝ 52

Doi:10.54503/0135-0536-2022.3-304

ԲԱԲԵԼՈՆՅԱՆ «ԱՍՏՂԱԳԻՏԱԿԱՆ ՕՐԱԳՐԵՐԸ» ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՄԱՍԻՆ*

Անգլիացի հայտնի սեպագրագետ Մարկ Գելլերի (Լոնդոն / Բեռլին) և իտալացի հայագետ Ջուստո Տրաինայի (Փարիզ) համատեղ հոդվածում [Mark Geller/Giusto Traina (London/Paris), "Tigranu, the Crown Prince of Armenia": Evidence from the Babylonian Astronomical Diaries, KLIO 95, 2013/2, pp. 44–454] *ներկայացված են մ. թ. ա. I դարում Բաբելոնի Էսագիլա տաճարի քրմերի կողմից դարեր շարունակ իրականացվող աստղագիտական հետազոտությունների շարքում (այսպես կոչված «Աստղագիտական Օրագրեր») Մեծ Հայքի արքա Տիգրան Մեծին վերաբերող երեք փոքր բեկորներ՝ գիտական տառադարձմամբ, թարգմանաբար և պատմագիտական մեկնաբանություններով: Հեղինակները գիտական շրջանառության մեջ են դրել Տիգրանի՝ Բաբելոնիայում պատանդության և Հայաստան վերադարձի հետ կապված արժեքավոր տեղեկություններ: Հաշվի առնելով դա՝ նպատակահարմար ենք գտել հոդվածը ներկայացնել թարգմանաբար՝ դրանք հայ ընթերցողին մատչելի դարձնելու նպատակով:*

ԱՐԱՄ ՔՈՍՅԱՆ

ՄԱՐԿ ԳԵԼԼԵՐ ԵՎ ՋՈՒՍՏՈ ՏՐԱԻՆԱ

*«Տիգրանուն՝ Հայաստանի թագաժառանգը». վկայություն բաբելոնյան աստղագիտական օրագրերից***

Տեքստերը

Տարօրինակ կերպով բաբելոնյան աստղագիտական օրագրերը սելևկյան թվագրության 216 թ. համար (մ. թ. ա. 95 թ.) հատուկ ուշադրություն են դարձրել ar-mi-ni-i *երկրին (Հայաստան) և հայկական «թագաժառանգ»* ti-ig-ra-nu-*ին (հայկ. Տիգրան, հուն.* Τιγράνης) *վերաբերող որոշ իրադարձությունների վրա: Չնայած դրանց արժեքին՝ այդ տեղեկություններն աչքաթող է արվել հայագետների և հին պատմության մասնագետների կողմից*[1]*:*

---

* *Ներկայացվել է 17. II. 2022 թ., ընդունվել է տպագրության 09. XI. 2022 թ.:*

** *Մենք երախտապարտ ենք Լուիս Բալլեստերոս Պաստորին, Ֆիլիպ Կլանսիեին, Ջուլիա Ֆրանչեսկա Գրասսիին և Ջեյմս Ռասսելին արժեքավոր դիտողությունների համար:*

[1] *Իր կյանքի վերջին շրջանում Գագիկ Սարգսյանը մի համառոտ հոդված գրեց* AD 3–95 D-*ի մասին (*Sarkisjan. [1994]), *սակայն նա այդ տեքստը թվագրում էր սելևկյան դարաշրջանի 230 թվականով (= մ. թ. ա.*

Աբրահամ Սաքսի և Հերման Հունգերի կողմից հրատարակված տեքստը, չնայած հիմնականում ճիշտ է, սակայն որոշ կետերում կարելի է վերանայել. «Հայկական թղթապանակը» բաղկացած է հետևյալ երեք օրագրերից.

a) AD 3–95C (BM 45712 = Sachs/Hunger [1996] 418)

5’ [... *a]l-te(?) um-ma* lugal *šá* uru.*ar-mi-ni-i* nam.meš x [^{m}Ti-ig-ra-nu ....

6’ [lú.dum]u.nita[2] *pi-qid ana* uru.*ar-mi-ni-i* mu-*a-ti*[3] *ana* lu[gal .... *šá*]

7’ [*ina* k]ur uri^{ki} tuš-*u’ ú-pe-hi-ir ma-diš*[4] érin.tah.meš-*šú it*-[*ti* .....

«[…] Ես լսեցի այսպես. Հայաստանի թագավորը մահացել է (և) [Տիգրանին ….. թագաժ]առանգին հանձնարարվել է [պաշտպանել?] Հայաստանն արքայի համար … ով] գտնվում է Բաբելոնիա[յում]: Նա լայնորեն հավաքեց իր օգնական զորքերը […….] հետ»[5]*:*

b) AD 3–95A (BM 46040 = Sachs/Hunger [1996] 416)

9’ [..... ^{m}*ar-šá-k*]*a-a* lugal lugal.meš *ina* uru.meš *šá ina li*-[*mit*]

10’ [..... mu]-*a-tì šá* uru.*ar-mi-ni*-[*i*]

11’ [..... lú].gal *ú-qa-a-nu ina* ká.[gal[6] uru]

12’ [.....].meš dù-*u’*

«[…….] Արշակը՝ արքայից արքան, [մտավ] քաղաքները, որոնք գտնվում էին […….] սահմանի վրա

[.....] որը Հայաստանի [.....],

[.....] բանակի հրամանատարը իրականացրեց [(ծեսեր?)]

[..... քաղաքի] դարպասի վրա»[7]*.*

c) AD 3–95D (BM 34791 = Sachs/Hunger [1996] 420; see also Böck [2010] 110)

---

82 թ.), այդ իսկ պատճառով մենք չենք կարող նրա պատմագիտական եզրակացությունները հաշվի առնել՝ չնայած այն հանգամանքին, որ նա «Թագաժառանգ Տիգրանին» նույնացնում էր Տիգրան Կրտսերի հետ:

[2] *Սովորաբար ընթերցվում է որպես ibila, սակայն* Sachs/Hunger *(1996)-ը ընթերցում է* x UŠ (= nita) *(նրան հետևում է* Böck [2010] 110-*ը), որը մեր ենթատեքստում, հավանաբար, պետք է նշանակի Տիգրանի կարգավիճակը որպես «Թագաժառանգ», ինչը հիշատակվում է այդ նույն օրագրի վերջում (Հակառակ կողմ 12),* al-te-e šá lú.dumu lugal šá ur[u.ar-mi-ni-i], *«Ես լսեցի, որ [Հայաստանի] թագաժառանգը […..]»:*

[3] Böck (2010) 110-*ում ընթերցվում է* mu-a-tìm.

[4] Sachs/Hunger (1996) *(ում հետևում է* Böck-*ը [2010] 110) ընթերցում է* ú-pe-hi-ir-ma ana, *որտեղ բացակայում է բայաձևի անցողական իմաստը:*

[5] Böck (2010) 110-*ը (ով թվագրում է Տիգրանի հիշատակությունները մ. թ. ա. 96 թ. և շրջում է դրանց ժամանակագրական հերթականությունը), թարգմանում է այսպես. «[...] ես լսեցի հետևյալը. Հայաստանի կառավարիչը մահացել է …/… նրան … վստահված էր: Հիմա այդ Հայաստանի … թագա[ժառանգի?] համար …/… ով Բաբելոնում է ապրում, նա հավաքեց և նրան աջակցելու համար … »:*

[6] *Սովորաբար ընթերցվում է* abul*:*

[7] Böck (2010) 109-*ը թարգմանում է այսպես.* “der Arsakide], König der Könige... in den Städten der Umgebung .../ ...eben dieser ...aus Armenien ... ...[das Ober]haupt über die Truppen ...am Tor ... ./..sie machten die...”.

10’ [.... ^{u}]^{ru}*se-lu-ke-’a-a šá ana* ugu ^{id}idi[gna .....
11’ [.....^{m}*t]i-ig-ra-nu* dumu lugal *šá uru.ar-mi-ni* kaskal *ana* ^{uru}*d*[*ura*?.....
«[.....] Սելևկիա[յից], որը գտնվում է Տիգրիսի [.....
[...] Տիգրանը՝ գահաժառանգը, արշավեց դեպի Դու[րա?»[8]*:*

«Արքան մահացել է»

Հայաստանի մահացած արքան Արտավազդ I-ն է՝ Մեծ Հայքի առաջին արքա Արտաշես I-ի (հուն. Ἀρταξίας) *որդին: Որքան որ մենք կարող ենք վերականգնել սուղ վկայությունների հիման վրա, Արտավազդը Տիգրանի հորեղբայրն էր և Տիգրան անունով Հայաստանի մեկ այլ արքա Տիգրանի եղբայրը*[9]*: Արտաշեսի արքայատոհմի ծագումնաբանության վերականգնման տարբեր փորձեր են կատարվել, սակայն Շոմոնը ենթադրել է, որ այս Տիգրանին պետք է դուրս հանել Հայաստանի արքաների ցանկից*[10]*: Այնուամենայնիվ, Լուցիուս Ամպելիուսի* Liber Memorialis *աշխատությունը* (terminus post quem: 131/3 AD) *նշում է Հայաստանի արքա Տիգրանեսի օգնությունը Պունիկյան երրորդ պատերազմի ժամանակ*[11]*, ավելին, հայկական ավանդությունը, որը գրի է առնվել ավելի ուշ Մովսես Խորենացու կողմից, հիշատակում է Տիրան անունով արքայի: Չնայած այս անունը տարբեր է, սակայն այստեղ կարելի է վկայակոչել միևնույն իրավիճակը. համաձայն Խորենացու, Արտավազդն Այրարատից վտարեց իր բոլոր եղբայրներին, բացի Տիրանից (Տիրան), ում հռչակեց որպես իր հաջորդի, քանի որ նա արու ժառանգներ չուներ*[12]*: Սրանից կարող ենք եզրակացնել, որ Տիգրան անունով մեկը կարող էր լինել Արտաշեսի հաջորդը:*

Մինչև Տիգրանի կառավարումը մենք որևէ վկայություն չունենք Հայաստանի վրա պարթևական հարձակման վերաբերյալ: Այդ հարձակման տարեթիվը վիճահարույց է. ինչպես առաջարկել է Շիփմանը (և ավելի

---

[8] *Այսպիսի ինտեգրման համար տես ստորև, 451:*

[9] *Ներկայացնելով Տիգրանին իր պատմության մեջ* App. Syr. 48, 247*-ը նրան անվանում է «Հայաստանի թագավոր Տիգրանես, Տիգրանեսի որդի»* (βασιλεὺς Ἀρμενίας Τιγράνης ὁ Τιγράνους). *Տե՛ս* Brodersen (1989) 76.

[10] Chaumont (1985–1988) 18 f. Assar (2006) 142*-ը նշում է, որ «Դատելով սեպագրական աղբյուրների վկայություններից, պարզ է դառնում, որ Տիգրան II-ին նախորդած արքան նրա հայրն էր, այլ ոչ եղբայրը»:*

[11] Ampel(ius) 32.1*-ը (Հայաստանի և Կապադովկիայի արքաներին նվիրված գլխում) գրում է.* Tigranes, qui iam scriptus est, qui tertio Punico bello populo Romano iuvit sub Manilio consule *[մ. թ. ա. 149 թ.]* et Scipione Aemiliano. *Տե՛ս նաև* Ampeli. 46, 7, *ով հիշատակում է Սցիպիոն Էմիլիանոսի կողմից «Տիգրանի հետ միասին» Կարթագենի ավերման մասին* (una cum Tigrane)*: Ամպելիուսի հաղորդած թվականի և բանասիրական խնդիրների մասին տե՛ս* Arnaud-Lindet *(1993).*

[12] *Մովսես Խորենացի. Պատմություն հայոց, 2.61:* Sandalgian (1917) *443-ը նրան անվանում է «Տիրան I»:*

զգուշորեն՝ Վիլը), պարթևները հնազանդեցրել են Հայաստանը միայն 97 թ.[13]*: Սակայն դա հակասում է Հուստինոսին, ով ասում է, որ պարթևական արքա Միհրդատը Հայաստանի արքա Արտավազդին հնազանդեցրել էր իր կառավարման վերջերին*[14]*, ավելին, Հուստինուսն ասում է, որ Տիգրանը պարթևների մոտ երկար ժամանակ պատանդ էր եղել*[15]*: Հուստինուսի հաղորդած տեղեկությունը որոշ ժամանակագրական խնդիրներ է հարուցում, քանի որ Միհրդատ I-ը մահացել է 125/4թ. և Միհրդատ II-ը կառավարել է 124/123 և 88/87 թթ. միջև: Վոլսկին իրադարձությունները վերականգնում է այսպես. Միհրդատ II-ը Հայաստանի դեմ երկու տարբեր արշավանքներ է կազմակերպել, և նա առաջին արշավանքը թվագրում է 115 և 105 թթ. միջև, իսկ երկրորդը ընդդեմ Տիգրանի՝ մ. թ. ա. 90 թ. մոտերքում*[16]*:*

Դա հաստատվում է AD 3–110 D *տեքստով, որը հիշատակում է* kur.ha-bi-gal-bat *(Խանիգալբատ) երկրում ծավալված ռազմական գործողությունների հետևանքները: Այդ հիշատակությունն այսպես է ընթերցվում.*

13’ [… *n*]*ag-ba-šú sa-ki-ki* diri ur3(= *urāt*)-*su na-du-u*.me <*ig*->*ga*[*m*]-*mar* ta an.ta-[*šú*]

14’ [*ana šap-l*]*i-ti-šú ana tar-ṣa* kur.*ha-bi-gal-bat áš-šú* lú.d[am.g]àr.meš *al-te*-[*me*]

«[Ինչ վերաբերում է …], ես առևտրականներից լսեցի. Նրա ջրամբարները տիղմով են լցված, նրա տանիքները փլված են, այն ավերված է [իր] վերին մասից [մինչև] իր ստորին մասը ընդհուպ մինչև Խանիգալբատ»:

Սեպագրական ավանդույթում Խանիգալբատ (տարբերակը՝ Խագիգալբատ) նախապես նշանակել է Միտտանին[17]*, այն նույնացվել է Հայաստանի հետ* AD 2–164*-ի ենթատեքստում,*[18] *որի բեկորային տեսքով պահ-*

---

[13] Schippmann (1980) 97; Will (1982) 452. *Տասնիններորդ դարում որոշ գիտնականներ գտնում էին, որ պարթևները հարձակվել էին Հայաստանի վրա արդեն Միհրդատ I-ի օրոք; քննադատական քննարկումը տե՛ս* Schottky (1989) 204 ff.

[14] 42.2.6: ad postremum Artoadisti, Armeniorum regi, bellum intulit: *Արքայի անվան համար տե՛ս* Chaumont. (1985–1988) 17; *Օտտո Զեելի. 1960 թ. Թոյբներյան հրատարակությունը ընդունում է* Artoasdi *մասին ենթադրությունը, որն առկա է Ֆրանց Ռյուլի Թոյբներյան հրատարակության մեջ (1886): Տե՛ս նաև* Prol. 42: utque Phrati successit rex Mithridates cognomine magnus, qui Armeniis bellum intulit: *Այս հատվածը հետևանք է Միհրդատ II-ի և Միհրդատ III-ի միջև չփոթի* (Wolski [1980] 257; Assar [2005] 17 f.):

[15] Iust. 38.3.1: obses Parthis ante multum temporis datus. *Տե՛ս ստորև, 450:*

[16] Wolski (1980): *Երկրորդ արշավանքի համար տե՛ս* Arnaud-Lindet (1993).

[17] *Տե՛ս* Van De Mieroop (2006) 150.

[18] BM 35015 (+ 35332 + 55531). Sachs/Hunger (1988) 496, B 15’.

[.....] uru.meš *šá* uru.*ha-bi-gal-bat šá* kur.ar-mi-ni$_5$ mu-*šú* sa$_4$-*ú* pi x x x [.....]

պանված տեղեկատվությունը նշում է Անտիոքոս IV-ի երկու արշավանքների մասին՝ մեկը դեպի Հայաստան, մյուսը՝ «ծով», այն է՝ Պարսից ծոց[19]*: Փաստացի այս տեքստում (սակայն աղյուսակը վատ վիճակում է) Խանիգալբատ տեղանունը հանդիպում է* ar-mi-ni[20] *տեղանվան առաջին հիշատակության հետ, ինչը կրկին կտեսնենք 69 տարի անց՝ մ. թ. ա. 95 թ. Օրագրի երեք հատվածներում*[21]*: Սակայն, անհրաժեշտություն չկա Խանիգալբատը դիտարկել որպես Հայաստանի հնացրած՝ «արքունի» անվանում*[22]*, և այն կարող էր ուղղակի նշանակել Հյուսիսային Միջագետքի տարածքը*[23]*: Ամեն դեպքում* AD 3 – 110 *տեքստը կարող է նշել մ. թ. ա. 110 թ. որպես Արտավազդ II-ի դեմ Միհրդատ II-ի արշավանքի թվա-*

[.....] Խաբիգալբատի քաղաքները, որի անունը կոչվում է Հայաստան .....

[19] *Տե՛ս* Del Monte (1997) 80 f. B 15' *տողը արձանագրված չէ* BM 45848+45907 *կրկնօրինակում, հնարավոր է, Օրագրում հերթականությունը այնքան էլ պարզ չէ և* Gera/Horowitz (1997)-ի *պատմագիտական մեկնաբանությունները (որոնց հետևում է* Mittag [2006] 296 f.-*ը) ավելի քիչ հավանական են, քան նրանք գտնում են:*

[20] *Հունգերն ընթերցում է* kur.*ar-mi-il?*, *քանի որ նա վստահ չէր այս դիրքում IL նշանի առկայության հարցում և այն անորոշ է, իսկ նշանի տեսքը նման է* ni_5 (NI)-*ին, որն այս ենթատեքստում ավելի դերադասելի է, տե՛ս* Gera/Horowitz (1997), *ովքեր գտնում են, որ Հայաստանի մայրաքաղաք Արտաշատի անունը եղել է* "Armil": Del Monte (1997) 81-ի, "[…] lo IL finale è abbastanza sicuro […] si può supporre che il Diarista abbia avuto difficoltà a trascrivere un nome geografico per lui nuovo che solo più tardi entrerà nella tradizione scribale". KUR *դետերմինատիվի փոխարեն* URU-*ի կիրառությունը, թվում է, ավելի բնութագրական Հայաստանի համար: Ավելի վաղ շրջանի աքքադական* Urašṭu *անվան հետ երկու դետերմինատիվներն էլ կիրառվում են.* Zadok (1985) 320 ff.:

[21] *Թվում է, որ սեպագրական համատեքստում այս անունը հիշատակվում է միայն Դարեհ I-ի Բիսութունյան արձանագրության մեջ, որտեղ Հայաստանի սատրապությունը, որը Բաբելոնյան և Էլամական տարբերակներում կոչվում է* Urašṭu, *հին պարսկական տարբերակում կոչվում է* Armina: DBi §26–30. Lecoq (1997) 197 f. *Աքեմենյան շրջանի բաբելոնյան աղբյուրներում* Urašṭu *անվան մասին տե՛ս* Zadok (1985) 320 f.

[22] Del Monte (1997) 81-*ը այն համարում է* "reminiscenza letteraria" *և նշում է մ. թ. ա. 169 թ. Օրագրում Եգիպտոսի համար* Meluhha *տերմինի կիրառությունը, հավանաբար, լայն իմաստով որպես «աշխարհի սահմանները»* (Del Monte [1997] 77)*:*

[23] *Ֆիլիպ Կլանսյեն գրում է* (e-mail of 10/14/2012). "Je vois mal le terme ïanigalbat désigner d'un coup etseulement là une région au nord du Zagros. Du coup on aurait une désignation traditionnelle de l'Urarṭu audélà du Zagros (mais à plus haute époque) et du ïanigalbat = Arménie du sud, dans la région couvrant le Triangle du ïābūr et le tout nord de la Mésopotamier jusqu'au Zagros. Cela marcherait bien aussi avec la campagne d'Antiochos IV en 164 qui se battait contre les débordements de l'Arménie en Mésopotamie".

կան, ինչպես արդեն ենթադրել է Դել Մոնտեն[24]*: Դա հաստատվում է նաև միևնույն Օրագրում «արքայից արքա» տիտղոսով, որն առաջին անգամ հիշատակվում է Արշակունի արքայի առնչությամբ, որը Միհրդատ II-ը Բաբելոնյան Օրագրերում կպահպանի մինչև մ. թ. ա. 91 թ. (մինչև Գոտարզի կողմից գահի բռնազավթումը)*[25]*:*

Տիգրանի աքսորը

Մինչև մ. թ. ա. 95 թ. ապրում էր Պարթևական կայսրությունում որպես արքայական պատանդ[26]*: Ինչպես հիշատակվում է* AD 3 95D 11' *տեքստում, նա պաշտոնապես ճանաչվում էր Հայաստանի «Թագաժառանգ»: Նրա աքսորումը հետևանք էր Պարթևական արքա Միհրդատ II-ի հետ ունեցած համաձայնության: Մենք նախադեպ ունենք ի դեմս Սելևկյան արքա Դեմետրիուս II-ի, ում Միհրդատ I-ը աքսորել էր Հիրկանիա*[27]*:*

AD 3–95D *տեքստը նրան անվանում է* mār šarri, *այն է՝ «Թագաժառանգ»: Դել Մոնտեն նշում է, որ Տիգրանը Արտավազդի որդին չէր և որ տիտղոսը սխալ չէ կիրառված, քանի որ այն կարող էր օգտագործվել ընդհանուր «արքայազն» իմաստով: Մյուս կողմից, քանի որ նա նախորդող արքա Տիգրանի որդին էր, նա կարող էր իրեն ներկայացնել որպես «(նախորդող) արքայի որդի»*[28]*:*

Համաձայն AD 3–95C, 7' *տեքստի, արքան ապրում էր Բաբելոնում, այսինքն Հարավային Միջագետքում.*[29] *փաստացի, ինչպես մենք հաստատեցինք* (argue) *կապված* AD 3–95D, 10' *տեքստի հետ, Տիգրանը կարող էր ապրել Տիգրիսյան Սելևկիայում: Մյուս կողմից, կարևոր է նշել Բաբելոնյան Օրագրերի հեղինակների կողմից նրա նկատմամբ հատուկ ուշադրությունը: Դել Մոնտեն, ով իրավացիորեն նշում է Էսագիլայի տաճարի քրմերի և Հայաստանի արքայազնի միջև առկա մերձավոր հարաբերությունների մասին, չի բացառում, որ Տիգրանը կարող էր բնակվել Բաբելոնում, այլ ոչ Սելևկիայում*[30]*:*

---

[24] Del Monte (1997) 154. *Դել Մոնտեն չի հիշատակում Վոլսկու և Շոմոնի ավելի վաղ ուսումնասիրությունները, այլ ուղղակի նշում է (ծան. 255).* "Il fatto che Pompeo Trogo collochi questa guerra verso la fine del regno di Mitridate II non fa naturalmente difficoltà".

[25] Del Monte. (1997) 153 and 250.

[26] Strab. 11.14.15 (ὡμέρευσε παρὰ Πάρθοις); Iust. 38.3.1 (*obses* Parthis […] datus).

[27] *Տե՛ս* Dąbrowa (2000) 52 f.

[28] Del Monte (1997) 167.

[29] kur uru^{ki} *(բառացի՝ «քաղաքի երկիր») Հունգերը թարգմանել է որպես «Բաբելոն»* (Sachs/Hunger [1996] 419)*: Սա հետևում է նույն օրինակին ինչն առկա է Հայաստանը* ^{uru}Arminî *անվանելու պարագայում:*

[30] Del Monte (1997) 166.

Արքայի վերադարձը

Մ. թ. ա. 95 թ. համընդհանուր կերպով համարվում է Տիգրան Մեծի կառավարման առաջին տարին[31]*:* AD 3–95D *տեքստը ներկայացնում է Տիգրանի երթը դեպի Արտաշատում* (Ἀρτάξατα) *գտնվող արքայական նստավայրը: Սարգսյանը տողավերջի* Du[… *-ն ընթերցում է որպես բայ*[32]*: Ավելի հավանական է, որ սա տեղանուն լինի. Շատ գրավիչ է այն ներկայացնել որպես* Du[win], *այսինքն հետագայի միջնադարյան մայրաքաղաք* Duin *(Դուին), որն այս ժամանակաշրջանում ամրոց էր և կազմում էր Արտաշատի պաշտպանական համակարգի մասը սկսած Մեծ Հայքի թագավորության հիմնադրումից (մոտ. մ. թ. ա. 188 թ.) և մ. թ. 59 թ. Հռոմի ռազմական գործողությունների շրջանում*[33]*: Սակայն փաստացի այս վարկածն անհավանական է, քանի որ Դվինը չէր գտնվում Միջագետքից Հայաստան տանող ճանապարհի վրա*[34]*: Ավելի հավանական է թվում ընթերցել* Du[ra. *Այս հին մակեդոնական գաղութը (հույների կողմից կոչվում էր Էվրոպոս) հաստատաբար գրավված էր պարթևների կողմից մ. թ. ա. 116 թ.*[35]*: Սակայն այս վարկածը պետք է դիտարկենք որոշ վերապահումներով, քանի որ դա այս անվան առաջին հիշատակությունն է սեպագրում և ավելի տրամաբանական կլինի ասել, որ Տիգրանը Բաբելոնից Հայաստան ճանապարհին անցել է Եփրատի վրա գտնվող այս կարևոր կենտրոնով*[36]*:*

Որպես փոխհատուցում իր ազատման դիմաց՝ արքան Միհրդատ II-ին տվեց հարավային Հայաստանի որոշ տարածքներ: Այս դրվագը հիշատակվում է Ստրաբոնի աշխատության մի հատվածում, որը վերաբերում է Տիգրանի ճակատագրի մեջ տեղի ունեցած փոփոխությանը. «քանի որ սկզբում նա պարթևների մոտ պատանդ էր և հետո նա կարողացավ նրանց միջոցով տուն վերադառնալ՝ հետևաբար վերջիններս որպես փոխհատուցում ստացան 70 հովիտներ (ἑβδομήκοντα αὐλῶνας) *Հայաստանում»*[37]*: Թվում է, որ* AD 3–95A*-ի ենթատեքստը հիշատակում է Միհրդատ II-ի կողմից Հայաս-*

---

[31] *Երբ նա Անտիոքում ընդունեց Հռոմի դեսպան Ապպիուս Կլավդիուսին (մ. թ. ա. 71 թ.), արքայի կառավարման 25-րդ տարին էր* (Plut. Lucullus 21.6)*:*

[32] Sarkisyan (1994) 238, “Am Ende der Zeile 11 haben wir als Ergänzung die Verben DÙ-epēšu ‚machen‘ und DÙ–alāku ‚gehen‘ als Alternativen vorgeschlagen”.

[33] K‘oč‘arean (1996). *Անվան համար տե՛ս* Hübschmann (1904) 422; Garsoïan (1989) 460.

[34] *Տե՛ս* Dillemann (1962).

[35] Sommer (2005) 295. *Դուրայի համար վերջերս տե՛ս* Coqueugniot (2011); Grassi (2012).

[36] *Որոշ կասկածներով,* Dura *սեպագրական անվանումը նույնացվել է* Da-ma-[ra] *տեղանվան հետ* Wiseman (1967) 496 *(տե՛ս, կասկածի տակ առնված՝* Zadok [1985] 116*)-ի կողմից:*

[37] Strab. 11.14.15. Chaumont (1985–1988) 24 f.*-ը կարծում է, որ «Քսանհինգ հովիտները» Մարաստանի մի փոքր շրջան էր, սակայն առաջարկում է որպես զուգահեռ* Chiliocomum (Amm. 23.3.5) *տեղանունը:*

տանի շրջակայքում գտնվող մի շարք քաղաքներ, որոնք կարող էին համապատասխանել Ստրաբոնի կողմից «հովիտներ» կոչվող վարչական միավորներին: Իրականում մի շարք հայկական աղբյուրներ Jor *«հովիտ» անվանում են Տարոն նահանգի և* Ասորեստանի *(Միջագետք) միջև գտնվող անցումը*[38]*:*

Այս պատմության մնացած մասը լավ հայտնի է: Սկզբնական շրջանում Տիգրանը պետք է համարվեր Պարթևստանից կախյալ կառավարիչ, ինչը ակնարկում է AD 3–95C, 6' *տեքստը: Սակայն իր՝ Հայաստան վերադարձից հետո նա դաշինք կնքեց Պոնտոսի արքա Միհրդատ VI-ի հետ*[39]*, որը նրան թույլ տվեց մ. թ. ա. 94 թ. գրավել Ծոփքը և Հարավային Կապադովկիան*[40]*: Մի քանի տարում նա այնքան հզորացավ, որպեսզի կարողանար սկսել փառավոր՝ չնայած անցողիկ նվաճողական քաղաքականություն: Մ. թ. ա. 87 թ. Միհրդատ II-ի մահը խթանեց այդ գործընթացը, քանի որ Արշակունիների թագավորությունը դրա արդյունքում ընկղմվեց նոր դինաստիական ճգնաժամի մեջ, հետո Հայաստանը դադարեց լինել կախյալ թագավորություն և Տիգրանը վերցրեց «արքայից արքա» տիտղոսը*[41]*: Հնարավոր է, նա այնքան հաջողակ էր, որ իր վերելքը կարողացավ կապել մի կարևոր աստղագիտական իրադարձության հետ, այն է՝ արեգակնային համակարգի ներսում Հալլեյի Գիսաստղի անցման հետ*[42]*: Այդպիսի զգացականությունն աստղագիտության հանդեպ անսովոր երևույթ չէր Փոքր Ասիայում. Նրա աներ Միհրդատ Էվպատորը նույն կերպ օգտագործում էր նման երևույթը դեռևս մ. թ. ա. 120 թ., այն է՝ իր կառավարման սկզբում*[43]*: Իսկ առայժմ գայթակղիչ է ենթադրել, որ Էսագիլայի տաճարի քրմերը իրենց ավանդն են ունեցել Տիգրանի արքայական գաղափարախոսության ձևավորման գործում:*

---

[38] Ps. Faustus. 4.1; *տե՛ս* Garsoïan (1989), *ով հակված է այն նույնացնելու Բիթլիսի լեռնանցքի հետ:*

[39] Arnaud (1987) 134. *Ավանդական «Պոնտոս» անվանումը վիճարկվում է* Mitchell (2002)*-ի կողմից, ով գերադասում է «Հյուսիսային Կապադովկիան», սակայն տե՛ս* Ballesteros Pastor (2007)*-ի քննադատությունը:*

[40] Manandian (1963) 26 f. *Պատմական ենթատեքստը տե՛ս* Ballesteros Pastor (1996) 71 ff.

[41] Traina (2012). *«Արքայից արքա» տիտղոսը դեռևս հիշատակվում է Արշակի համար 88/87 թ., ինչպես ցույց է տալիս Ավրոմանի մագաղաթը.* Minns (1915) 38. *Պարթևական արքաներին վերաբերող բաբելոնյան օրագրերում այս տիտղոսի համար տե՛ս* Oelsner (1975) 36 ff. *(ավելի ուշ՝* Böck [2010]); Arnaud (1987) 144 f.*; հետագա գրականությունը՝* Dąbrowa (2010) 120 n. 50. Traina *(հրատ. ընթացքում): Այլ մեկնաբանության համար տե՛ս* Shayegan (2011) 315 ff.

[42] *Տիգրան արքայի որոշ արծաթե և պղնձե դրամների վրա նույնականացվել է գիսաստղ որպես թագի բաղադրիչներից մեկը, հավանաբար ակնարկելով նոր դարաշրջանի սկիզբը* (Gurzadyan/Vardanyan [2004]; Mayor [2009] 30 ff.; Duyrat [2012] 196 f.)*: Չնայած այս վկայությունը հետաքրքիր է, հանգամանալի հետազոտության կարիք ունի. տե՛ս* Panaino*-ի կասկածները (հրատ. Ընթացքում):*

[43] Mayor (2009) 30 ff.

Ամփոփում

Երկու աստղագիտական Օրագրեր, որոնք թվագրվում են Սելևկյան դարաշրջանի 216 թվականով (= մ. թ. ա. 95 թ.), հիշատակում են Թագաժառանգ ti-ig-ra-nu-*ին, այն է՝ Հայաստանի արքա «Մեծին» (մ. թ. ա. 95 – մոտ. 55 թթ.): Տեքստերի նոր ընթերցումը թույլ է տալիս շտկել որոշ հատվածների ընթերցումները և առաջարկել Մեծ Հայքին վերաբերող իրադարձությունների պատմագիտական մեկնաբանություններ՝ Արտավազդ I-ի մահվանից մինչև Տիգրանի կառավարման սկիզբը՝ Հարավային Միջագետքում որպես արքայական պատանդ գտնվելուց հետո:*

BIBLIOGRAPHY

Arnaud (1987): P. Arnaud, Les guerres des Parthes et de l'Arménie dans le première moitié du premier siècle av. n.è. : problèmes de chronologie et d'extension territoriale (95 B.C.–70 B.C.), Mesopotamia 22, 1987, 129–145.

Arnaud-Lindet (1993): M.-P. Arnaud-Lindet, Lucius Ampélius. Aide-mémoire (Liber memorialis), Paris 1993.

Asdourian (1911): P. Asdourian, Die politischen Beziehungen zwischen Armenien und Rom von 190 v. Chr. bis 428 n. Chr., Venezia 1911.

Assar (2005): G. R. Assar, The Genealogy of the Parthian King Sinatruces (93/2–69/8 BC), Journal of the Classical & Medieval Numismatic Society s. 2.6, 2005, 16–33.

Assar (2006): G. R. Assar, A Revised Parthian Chronology of The Period 165–91 BC, in: E. Dąbrowa (ed.), Greek and Hellenistic Studies (Electrum 11), Kraków 2006, 87–158.

Ballesteros Pastor (1996): L. Ballesteros Pastor, Mitrídates Eupátor, rey del Ponto, Granada 1996.

Ballesteros Pastor (2007): L. Ballesteros Pastor, Del reino Mitridátida al reino del Ponto: origenes de un término geogr Texteáfico y un concepto político, OTerr 9, 2007, 3–10.

Böck (2010): B. Böck, Keilschriftliche, in: U. Hackl/B. Jacobs/D. Weber (eds.), Quellen zur Geschichte des Partherreiches. Textsammlung mit Übersetzungen und Kommentaren, B. 3, Göttingen 2010, 1–174.

Brodersen (1989): K. Brodersen, Appians Abriss der Seleukidengeschichte (Syriake 45, 232–70, 369). Text und Kommentar, München 1989.

Chaumont (1985–1988): M.-L. Chaumont, À propos des premières interventions parthes en Arménie et des circonstances de l'avènement de Tigrane le Grand, AAntHung 31, 1985–1988, 13–25 (= in: J. Harmatta [ed.], From Alexander the Great to Kül Tegin, Budapest 1990, 19–31).

Chaumont (1995): M.-L. Chaumont, rev. Schottky (1995/1989), Gnomon 67, 1995, 330–336.

Coqueugniot (2011): G. Coqueugniot, The Oriental Agora: the Case of Seleucid Europos-Dura, Syria, in: A.

Giannikouri (ed.), Η αγορά στή Μεσόγειο από τούς ομηρικούς έως τούς ρωμαϊκούς χρόνους/The Agora in the Mediterranean from Homeric to Roman Times, Athena 2011, 296–308.

Dąbrowa (2000): E. Dąbrowa, L'expédition de Démétrios II Nicator contre les Parthes = Dąbrowa (2011) 49–73.

Dąbrowa (2010): E. Dąbrowa, The Parthian Kingship = Dąbrowa (2011) 111–121.

Dąbrowa (2011): E. Dąbrowa, Studia Graeco-Parthica. Political and Cultural Relations between Greeks and Parthians, Wiesbaden 2011.

Del Monte (1997): G. Del Monte, Testi dalla Babilonia ellenistica. Volume I. Testi cronografici, Pisa/Roma 1997.

Dillemann (1962): L. Dillemann, Haute Mésopotamie orientale et pays adjacents: contribution à la géographie historique de la région, du Ve s. avant l'ère chrétienne au VIe s. de cette ère, Paris 1962.

Duyrat (2012): F. Duyrat, Tigrane en Syrie: un prince sans images, CEA 49, 2012, 167–209.

Garsoïan (1989): N. G. Garsoïan, The „Epic Histories" Attributed to P'awstos Buzand (Buzandaran Patmut'iwnk'), Cambridge (Ma.) 1989.

Gera/Horowitz (1997): D. Gera/W. Horowitz, Antiochus IV in Life and Death: Evidence from the Babylonian Astronomical Diaries, JAOS 117, 1997, 240–252.

Grassi (2012): G. F. Grassi, Semitic onomastics from Dura Europos. The names in Greek script and from Latin epigraphs, Padova 2012.

Gurzadyan/Vardanyan (2004): V. Gurzadyan/R. Vardanyan, Halley's comet of 87 BC on the coins of Armenian king Tigranes?, Astronomy & Geophysics 45, 2004, 4–6.

Hübschmann (1904): H. Hübschmann, Die altarmenischen Ortsnamen. Mit Beiträgen zur historischen Topographie Armeniens, IF 16, 1904, 197–490 (reprinted Amsterdam 1969).

Jacobs (1994): B. Jacobs, Die Satrapienverwaltung im Perserreich zur Zeit Darius' III. (TAVO Beih. B 87), Wiesbaden 1994.

K'oč'arean (1996): G. K'oč'arean, Antik Duinə, Artašati paštpakan hamakargum (The ancient Duin in the defensive system of Artaxata), Handēs amsoreay 110, 1996, col. 336–359.

Lecoq (1997): P. Lecoq, Les inscriptions de la Perse achéménide, Paris 1997.

Manandian (1963): H. Manandian, Tigrane II et Rome. Nouveaux éclaircissements à la lumière des sources originales, Lisboa 1963 (originally published in Armenian, Erevan 1943).

Manandian (1965): H. Manandian, The Trade and Cities of Armenia in Relation to Ancient World Trade, Lisboa 1965 (originally published in Armenian, Erevan 1946).

Mayor (2009): A. Mayor, The Poison King. The Life and Legend of Mithradates, Rome's Deadliest Enemy, Princeton 2009.

Minns (1915): E. H. Minns, Parchments of the Parthian Period from Avroman in Kurdistan, JHS 35, 1915, 22–65.

Mitchell (2002): S. Mitchell, In Search of the Pontic Community in Antiquity, PBA 114, 2002, 35–64.

Mittag (2006): P. F. Mittag, Antiochos IV. Epiphanes. Eine politische Biographie (Klio Beih. N.F. 11), Berlin 2006.

Oelsner (1975): J. Oelsner, Randbemerkungen zur arsakidischen Geschichte anhand von babylonischen Keilschrifttexten, AoF 3, 1975, 27–45.

Panaino (forthcoming): A. Panaino, Mithridates, „King of Kings“ and the Iranian Background, in: D. Braund/A. Dan/H.-J. Gehrke (eds.), The Charisma of the King: New Insights into Mithridates VI Eupator's Rule and Legitimation of Rule.

Sachs/Hunger (1988): A. J. Sachs/H. Hunger, Astronomical Diaries and Related Texts from Babylonia, Vol. II. Texts from 652 B.C. to 165 B.C., Wien 1988.

Sachs/Hunger (1996): A. J. Sachs/H. Hunger, Astronomical Diaries and Related Texts from Babylonia, Vol. III. Texts from 164 B.C. to 61 B.C., Wien 1996.

Sandalgian (1917): J. Sandalgian, Histoire documentaire de l'Arménie des âges du paganisme (1410 av.–305 apr. J.-C.) II, Roma 1917.

Sarkisyan (1994): G. Sarkisyan, Eine Rekonstruktion der Artašesidendynastie Armeniens nach dem seleukidischen astronomischen Tagebuch BM 34791, AMI 27, 1994, 237–240.

Schippmann (1980): K. Schippmann, Grundzüge der parthischen Geschichte, Darmstadt 1980.

Schottky (1989): M. Schottky, Media Atropatene und Gross-Armenien in hellenistischer Zeit, Bonn 1989.

Shayegan (2011): M. R. Shayegan, Arsacids and Sasanids: Political Ideology in Post-Hellenistic and Late Antique Persia, Cambridge 2011.

Sommer (2005): M. Sommer, Roms orientalische Steppengrenze. Palmyra – Edessa – Dura-Europos – Hatra. Eine Kulturgeschichte von Pompeius bis Diokletian, Wiesbaden 2005.

Traina (2012): G. Traina, Tigran il Grande d'Armenia e la Giudea, in: G. Urso (ed.), Iudaea socia – Iudaea capta, Pisa 2012, 79–88. Traina (forthcoming): G. Traina, Tigran and Mithridates: two parallel „Kings of Kings“?, in: D. Braund/A.Dan/H.-J. Gehrke (eds.), The Charisma of the King: New Insights into Mithridates VI Eupator's Rule and Legitimation of Rule.

Van De Mieroop (2006): M. Van De Mieroop, A History of the Ancient Near East, ca. 3000–323 BC, revised edition Oxford 2006.

Will (1982): É. Will, Histoire politique du monde hellénistique (323–30 av. J.-C.), II, Nancy ^{2}1982.

Wiseman (1967): D. J. Wiseman, A Late Babylonian Tribute List?, BSOAS 30, 1967, 495–504.

Wolski (1980): J. Wolski, L'Arménie dans la politique du Haut empire parthe (env. 175–77 av. J.-C.), IA 15, 1980, 251–267.

Zadok (1985): R. Zadok, Répertoire géographique des textes cunéiformes. 8. Geographical Names According to New and Late Babylonian (TAVO Beih. B 7/8), Wiesbaden 1985.